

**«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամ**

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի պաշտոնակատարի
02.04.2019 թ. թիվ 206 Լ/Կ հրամանի

**ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ԱՄԲԻՈՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ «3» 28.03.2019թ.

Վանաձոր
2019թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Ռեսուրս կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Վանաձորի պետական համալսարանի (այսուհետ՝ ՎՊՀ) Օտար լեզուների (այսուհետ՝ ՕԼ) ամբիոնին կից գիտակրթական կառուցվածքային ստորաբաժանում է:
- 1.2. Կենտրոնն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով:
- 1.3. Կենտրոնի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ «Ռեսուրս կենտրոն», ռուսերեն՝ «Ресурсный центр», անգլերեն՝ «Resource Centre»:
- 1.4. Կենտրոնը ՎՊՀ կանոնադրությամբ և ՀՀ հիմնադրամների մասին օրենքով սահմանված կարգով իրավասու է զբաղվել կրթական և ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպմամբ:
- 1.5. Կենտրոնի հասցեն է՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 36:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կենտրոնի հիմնական խնդիրներն են.

- 2.1. խթանել գիտակրթական համակարգի զարգացումը, նպաստել գիտելիքների և փորձի ձեռքբերմանը,
- 2.2. անգլիալեզու կրթական ծրագիր իրականացնելու նպատակով «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրում ներդնել օտար լեզվով դասավանդվող հումանիտար և սոցիալ-տնտեսական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական մոդուլներ,
- 2.3. դիտարկելով հարատև կրթության կարիքները տարածաշրջանային զարգացման համատեքստում՝ կազմակերպել ՎՊՀ դասախոսների շարունակական վերապատրաստում «Անգլերենը ակադեմիական միջավայրում» ծրագրով՝ ներգրավելով այս գործընթացին «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների,
- 2.4. անգլերեն դասավանդող երիտասարդ կադրերի մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով կազմակերպել վարպետության բարձրացման մեթոդական սեմինարներ,
- 2.5. տարածաշրջանի անգլերեն լեզվի ուսուցիչներին խորհրդատվություն տալու նպատակով կազմակերպել սեմինարներ, բաց դասեր, կլոր-սեղան հանդիպումներ,

- 2.6. ծավալել դասավանդման առաջավոր փորձի փոխանցման գործունեություն՝ պարբերաբար անցկացնելով վարպետաց դասեր Լոռու մարզի հանրակրթական դպրոցներում,
- 2.7. ուսումնասիրել եվրոպական երկրների առաջավոր բուհերի մանկավարժական, գիտամեթոդական և գիտահետազոտական փորձը և իրականացնել բենչմարքինգ՝ հաշվի առնելով այդ բուհերում ուսումնասիրություն անցած ՎՊՀ ուսանողների ստացած գիտելիքները, հմտություններն ու տպավորությունները,
- 2.8. արտալսարանային պայմաններում ուսանողների անզլերեն լեզվի հմտություններն ու կարողությունները զարգացնելու նպատակով շարունակել և ընդլայնել օտար լեզուների ամբիոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ գործող խմբակների գործունեությունը:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնն ունի գործունեության հետևյալ ուղղությունները.

1. Լեզուների ուսուցում 4 հիմնական ուղղություններով.
 - **EMI** (անզլերենը որպես դասավանդման լեզու),
 - **General English** (ընդհանուր անզլերեն),
 - **ESP** (հատուկ մասնագիտական անզլերեն),
 - **Language Proficiency Exam Preparation** (անզլերենի նախապատրաստական դասընթաց՝ TOEFL, IELTS քննություններին մասնակցել ցանկացողների համար, (ակադեմիական անզլերեն)):
2. Դրամաշնորհային կազմակերպությունների հետ կապերի հաստատում և զբանտային ծրագրերի մշակում և ներդրում (Fundraising and Grant Projects Development and Implementation)
3. Դպրոց-բուհ-աշխատաշուկա համագործակցություն.
 - սեմինարներ, բաց դասեր, կլոր-սեղան հանդիպումներ տարածաշրջանի անզլերեն լեզվի ուսուցիչների համար,
 - վարպետաց դասեր տարածաշրջանի հանրակրթական դպրոցների աշակերտների համար,
 - բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում:
4. Անզլերենի դասավանդման առաջավոր փորձի և նորարարական մեթոդների ներդրում.

- բենչմարքինգ՝ եվրոպական բուհերում ուսումնառություն անցած ՎՊՀ ուսանողների և այդ բուհերում դասավանդած կամ վերապատրաստված ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի փորձի հիման վրա,
- նորարարական մեթոդների ներդրում՝ PRINTeL ծրագրի շրջանակներում վերապատրաստված մասնագետների աջակցությամբ:

5. Անգլերենի խմբակների գործունեություն 5 հիմնական ուղություններով.

- **TED-Talk Club** (TED-Talk խմբակ),
- **Business English Club** (Գործարար անգլերենի խմբակ),
- **Career Skills Development Club** (Կարիերայի կառավարման հմտությունների զարգացման խմբակ),
- **Reading and Recitation Club** (Ընթերցանության և ասմունքի խմբակ),
- **Writing Club** (Գրավոր խոսքի զարգացման խմբակ):

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 4.1. Կենտրոնի աշխատանքները համակարգում է Կենտրոնի ղեկավարը, ում նշանակում և ազատում է ՎՊՀ ռեկտորը:
- 4.2. Կենտրոնի ղեկավարի առաջարկությամբ և ներկայացմամբ ՎՊՀ ռեկտորը հաստատում է նաև Կենտրոնի Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմը:
- 4.3. Կենտրոնի ղեկավարի նշանակմամբ Խորհրդի յուրաքանչյուր անդամ համակարգում է Կենտրոնի գործունեության որևէ բնագավառ:
Խորհրդի անդամներն իրենց գործունեության համար անմիջական պատասխանատվություն են կրում Կենտրոնի ղեկավարի առջև:
- 4.4. Խորհուրդը կազմակերպական, խորհրդակցական մարմին է: Այն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով՝ ամիսը ոչ պակաս, քան մեկ անգամ:
Խորհուրդը կազմված է 5 անդամից:
- 4.5. Կենտրոնի ղեկավարը, Խորհուրդը ձևավորվում են օտար լեզուների ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից:
- 4.6. Կենտրոնի ղեկավարը և Խորհրդի անդամներն իրենց աշխատանքն իրականացնում են հասարակական հիմունքներով:
- 4.7. Կենտրոնի գործունեությանն օժանդակելու նպատակով Կենտրոնի ղեկավարը՝ ռեկտորի համաձայնությամբ, Կենտրոնի աշխատանքներում

կարող է ներգրավել այլ մասնագետների (արտաքին փորձագետ, սոցիոլոգ, իրավաբան և կրթության ոլորտի այլ մասնագետներ):

4.8. Կենտրոնում վճարովի ուսումնական կամ կրթական դասընթացների կազմակերպման, միջազգային ուսումնական ծրագրերի իրականացման և այլ մասնագետների ներգրավման դեպքում՝ աշխատանքի վարձատրությունը որոշվում է պայմանագրային հիմունքներով՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5. ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՆՂԱՄԱԿՑԵԼԸ

5.1. Կենտրոնին անդամակցությունն իրականացվում է կամավորության սկզբունքով:

5.2. Կենտրոնում անդամակցությունն իրականացվում է հասարակական հիմունքներով:

5.3. Կենտրոնի անդամ կարող է դառնալ ՎՊՀ օտար լեզուների ամբիոնի յուրաքանչյուր դասախոս, ով իր գործունեությամբ նպաստում է Կենտրոնի կողմից առաջադրված նպատակների իրագործմանը, աշխատում է մեծ նվիրումով և պատասխանատվության բարձր զգացումով:

5.4. Անդամագրումը կատարվում է Խորհրդի որոշմամբ:

5.5. Կենտրոնի անդամը իրավունք ունի՝

- ընտրել և ընտրվել կենտրոնի ղեկավար մարմիններում,
- ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել Կենտրոնի գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
- մասնակցել Կենտրոնի գործունեության ծրագրերի կազմմանը, և ներկայացնել ծրագրային թեմաներ,
- ազատորեն արտահայտել սեփական տեսակետը:

5.6. Կենտրոնի անդամը պարտավոր է.

- նպաստել Կենտրոնի նպատակների և խնդիրների իրականացմանը,
- անձնական ակտիվություն ցուցաբերել Կենտրոնի գործունեության խնդիրների և նպատակների իրականացման գործում, լինել նախաձեռնող,
- իր գործունեությամբ բարձր պահել Կենտրոնի հեղինակությունը, առանց Կենտրոնի իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես չգալ Կենտրոնի անունից,
- աջակցել կազմակերպության գործունեությանը,

- լինել օրինապահ, գործել սույն կանոնակարգին համապատասխան, կատարել Կենտրոնի ղեկավարի և Խորհրդի կողմից ընդունած որոշումները:

6. ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 6.1. Կենտրոնը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Համալսարանի գիտխորհրդի որոշման հիման վրա՝ ՎՊՀ ռեկտորի հրամանով:
- 6.2. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են Կենտրոնի խորհրդի ներկայացմամբ՝ ՎՊՀ գիտական խորհրդի որոշմամբ և հաստատվում են ՎՊՀ ռեկտորի կողմից՝ հրամանով:

